

Ս. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ, Ժամանակակից գրական հայերեն, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 419 էջ:

Ժամանակակից հայերենի ուսումնասիրությունը հասել է ակնառու նվաճումների: Տարիներին ընթացքում արդի հայերենի կառուցվածքի զանազան հարցերի վերաբերյալ լույս են տեսել մի շարք ուսումնասիրություններ, ձեռնարկներ: Սակայն այդ աշխատությունները, պատկանելով առանձին հեղինակների զբյուրին, լեզվանյութը քննած լինելով տարբեր հայեցակետերից, հաճախ լեզվական միևնույն իրադրության մասին ներառում են իրարամերժ տեսակետներ: Վաղուց զգացվում էր ժամանակակից գրական հայերենի ամբողջ համակարգն ընդգրկող ու ընդհանուր սկզբունքով գրված մի ամփոփ աշխատություն ունենալու անհրաժեշտությունը: Այս բացը լրացնելու եկավ քոնասիրական գիտությունների դեկտոր, պրոֆեսոր Ս. Գ. Արրահամյանի «Ժամանակակից գրական հայերեն» աշխատությունը:

Նախապես նշենք, որ մենագրության հեղինակը, սղտագործելով հայ դասական քերականագիտության գրական փորձն ու ժամանակակից լեզվաբանության նվաճումները, ստեղծել է մեր գրական հայերենին նվիրված բարձրարժեք մի աշխատություն, որ համակողմանիորեն քննվում են ժամանակակից հայերենի բոլոր մակարդակները՝ հնչույթային, բառական, ձևաբանական և շարահյուսական: Աշխատությունը արդի հայերենի համաժամանակյա ուսումնասիրությունն է, բայց նրանում մասամբ առկա է նաև տարժամանակյա մոտեցումը. լեզվական որոշ իրադրությունների ներկա օրինաչափությունների հիմնավորման կապակցությամբ հեղինակը անդրադառնում է մեր լեզվի նախորդ շրջափուլերում (մասնավորապես գրաբարում ու աշխարհարարի վաղ շրջանում) գրանցող գրականների: Ս. Արրահամյանի մենագրությունը շահեկան է նաև մեկ այլ առումով: Այն գրելիս հեղինակի առջև, բնականաբար, ծառացել է դժվարին մի խնդիր՝ ճիշտ կողմնորոշվել լեզվական նորմերը խախտող հնչյունափոխական-արտասանական, հնչյունափոխական, բառական, ձևաբանական ու շարահյուսական տարաբնույթ զուգաձևությունների զննատման հարցում, սահմանազատել ընդունելի մերժելիք և նպաստել առաջինի կանոնարկմանը: Եվ ի պատիվ հեղինակի, պետք է նշել, որ նա միանգամայն ճիշտ լուծում է տվել խնդրո առարկա հարցերին: Ավելին, ընդհանրապես երևույթները ներկայացնելով իրենց համակարգային ամբողջության մեջ, նա հատկապես կանգ է առնում գործնական նշանակություն ունեցող իրականությունների վրա՝ մեծացնելով լեզվի նորմավորմանը բերած իր նպաստը:

Գրախոսվող աշխատությունը կազմված է համակարգային վերլուծության սկզբունքով և բաղկացած է «Հնչյունաբանություն», «Բառագիտություն», «Ձևաբանություն», «Շարահյուսություն» բաժիններից: Այն սկսվում է հնչյունաբանության ուսումնասիրության առարկայի մեկնությամբ: Հնչյունաբանությունն ուսումնասիրում է լեզվի հնչույթային համակարգը, հնչույթների դրսևորումները, վերհնչույթային հնչական միավորները (շեշտ, հնչերանգ, վանկ, հնչաբառ և այլն), որոնք ուրիշ աշխատություններում քննվում են տարբեր ենթաբաժիններով (հնչույթաբանություն, բուն հնչյունաբանություն, վերհնչույթային հնչաբանություն), բայց սույն մենագրության մեջ ներկայացվել են համատեղ՝ պայմանավորված աշխատության գործնական բնույթով: Արրահամյանը քննում է ճեշտը և ճեշտյա և ճեշտն հասկացությունները՝ առաջինը դիտելով որպես լեզվի հնչական արտահայտության նվազագույն միավոր, որն ունի բառերի, ձևությունների իմաստաձևավորելու դեր (էջ 8), իսկ երկրորդը՝ միևնույն հնչույթի խոսքային դրսևորումը, կատարում է ձայնավոր և բաղաձայն հնչյունների (իմա՝ հնչույթների) դասակարգումները համապատասխան հիմունքներով:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում անխուսափելի են դառնում հնչյունական համակարգում կատարվող փոփոխությունները, որոնց մի մասը պատմական բնույթ ունի, մյուս մասը հետևանք է բառաշեշտի տեղափոխության, իսկ երրորդը՝ հնչյունների փոխազդեցության

և այլ գործոնների՝ Սուլյն աշխատության մեջ ներկայացված են ավանդական բնույթ ունեցող շեշտափոխական հնչյունափոխության այն դրսևորումները, որոնք հիմնականում ներառում են ի, ու, և ձայնավորների հնչյունափոխությունը՝ Ընդհանուր առմամբ շեշտափոխական հնչյունափոխության հարցում էական դեր են խաղում «ա» ձայնավորի բնույթը, բ) բառի ածման բնույթը, դ) վանկի քանակը, ղ) վանկի բնույթը» (էջ 25)։ Ինչ վերաբերում է փոխադրեցական հնչյունափոխությանը, այն հնչյունների փոխադարձ ազդեցության հետևանք է և ունի մի քանի դրսևորումներ՝ առնմանում, տարնմանում, դրափոխություն, համաքանություն, հարմարեցում, ամփոփում և այլն, որոնք գերադանցապես ունեն հնչյութային արժեք։ Դրանցից բացի, հեղինակը քննում է նաև «ենթահնչյութային փոփոխության իրավություններ, որոնք ուղղախոսական արժեք ունեն, ուրեմն և գործնական հետաքրքրություն են ներկայացնում» (էջ 25)։

Լեզվական մյուս մակարդակը՝ բառականը, քննվում է բառադիտության բաժնում, որն իր հերթին ունի մի քանի ենթաբաժիններ՝ բառաիմաստաբանություն, բառակազմություն, բառապաշար, դարձվածաբանություն։ Բառագիտության ուսումնասիրության առարկան ամենից առաջ լատն է, որը շատ քննված և տարբեր մեկնություններ ստացած իրակություններից է։ Ս. Արքա-համյանը բառի հանրահայտ հատկանիշներին հավելում է նրան բնորոշ, բայց մեզանում աննկատ մնացած մեկ այլ առանձնահատկություն՝ անընդմիջարկելիությունը՝ ավելի հարստացնելով և ամրողեցնելով բառի սահմանումը. «Բայն այն հնչյունակապակցությունն է կամ հնչյունը, որն ունի ավարտուն իմաստ, անկախ գործածություն, շեշտ և անընդմիջադիմելի է» (էջ 35)։ Ուշագրավ է նաև իմաստաբանություն ավանդական տերմինի փոխարինումը բառաիմաստաբանությունով, որը, մեր կարծիքով, տվյալ դեպքում ավելի նախընտրելի է։ Այս ենթաբաժնում հեղինակը հանգամանորեն քննում և մի շարք դեպքերում նորովի է մեկնաբանում մենիմաստ ու բազմ-իմաստ բառերը, բազմիմաստացումը ու մենիմաստացումը, բառիմաստը, համատեղաստ ու խոսքերարարությունը, բառի պատճառաբանված ու չպատճառաբանված, ելակետային ու ածանցյալ, զլխավոր ու երկրորդական, ուղղակի և փոխաբերական իմաստները, բառիմաստի փոփոխության հիմունքները, ձևաիմաստային փոխհարաբերության տեսակետից բառերի տեսակներն ու դրանց գործածությունը և այլն։

Բառի բառակազմական վերլուծությունը հանգեցնում է լեզվի իմաստակիր նվազագույն միավորների՝ ձևությունների տարբերականնր։ Ս. Արքահամյանը քննում է ձևությունի տեսակներն ու տարբերակը, ձևությունների պարզումն ու վերակազմավորումը, բառերի կազմավորման եղանակներն ու տեսակները ըստ կազմության, բառաբարդումն ու բառածանցումը՝ հանդես բերելով նուրբ դիտողականություն, կայունացած դրությունները նորովի գնահատելու կարողություն։ Հայերենի բառերի կազմավորման կաղապարային և փոխանցումային եղանակները գործառվում են տարբեր միջոցներով։ Ս. Արքահամյանը կաղապարային եղանակի իրականացման բառակազմական միջոցներ է դիտում՝ ա) բառական հիմքերի միացումը, բ) կիսահարաբերումը, գ) հապավումը, ղ) ածանցումը, իսկ փոխանցումային եղանակի իրականացման միջոցներն՝ ա) բառակապակցական և բ) բառաքերականական ձևերը։ Անդրադառնալով բառաբարդման տեխնիկային՝ աշխատության հեղինակը բարդ բառերն ըստ կապի սերտության բաժանում է երկու խմբի՝ համադրական և հարադրական, իսկ դրանք էլ՝ ենթախմբերի (համադրականները՝ հոդակապավոր և անհոդակապ, հարադրականները՝ բուն հարադրական և կիսահարադրական), բացահայտում է հայերենի զարգացման աղբյի փուլում բառաբարդման զրսևորած նոր միտումները։ Նա նմանապես քննում է նաև բառածանցումը։

Մենագրության հետաքրքրական մասերից մեկը բառապաշարի քննությունն է։ Այստեղ տրվում է հայերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը, կատարվում նրա դասակարգումը. ա) ըստ հարստացման աղբյուրի, բ) ըստ գործածության ոլորտի, գ) ըստ արդի փուլում գործածության ծավալման ու սահմանափակման և այլն։

Եզմանակակից գրական հայերենի մեծ մասը (էջ 124—407) նվիրված է հայերենի քերականական կառուցվածքի խոր ու համակողմանի քննությանը։ Այստեղ, լեզվաբանության զարգացման արդի պահանջներով պայմանավորված, նոր մեկնաբանությունները և քերականական միջարք ըմբռնումների վերանայումներն ու ճշգրտումները, նոր հարցադրումներն ավելի շատ են։

Ձևաբանության բաժնում բառերի խոսքիմասային առանձնահատկությունների բացահայտման համար էական նշանակություն ունեցող ձևաբանական կարգ և ճարտարություն, բառ և քառաձև, ձևաբանական վերլուծություն և մի քանի այլ հասկացությունների մեկնաբանություն-

նից հետո հեղինակը կատարում է խոսքի մասերի դասակարգումը և անցնում դրանց քննությանը: Նա խոսքի մասերի տարաստիճանն ու տարաբնույթ հակադրությունները բացահայտելու համար իմաստաբանական-իմացաբանական մեկնաբանության և արդի կառուցվածքային լեզվաբանության մակարդակների ու լեզվական համակարգի հիերարխիկ բնույթի հիման վրա կատարում է դրանց աստիճանական դասակարգումը՝ լեզվի բառային կազմն ըստ բառիմաստի ընդհանուր բնույթի բաժանելով երեք՝ խմբի՝ ա) նյութական իմաստ ունեցող խոսքի մասեր՝ դոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, բ) քերականական իմաստ ունեցող խոսքի մասեր՝ կուպ, շաղկապ, գ) վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասեր՝ եղանակավորիչ (եղանակավորող բառեր), ձայնարկություն: Այս դասակարգումը, մեր կարծիքով, բոլոր դասակարգումներից ամենաընդունելի է և ավելի զերծ է հակասություններից, քանի որ կատարված է այն բանի հաշվառումով, որ՝

ա) Գոյություն ունի նյութական աշխարհ իր տարբեր հատկանիշներով:

բ) Առարկաների, երևույթների միջև կան տարբեր կարգի հարաբերություններ:

գ) Խոսելով այդ ամենի մասին՝ մենք միաժամանակ զրուցում ենք մեր վերաբերմունքը (էջ 130--131):

Խոսքի մասերի դասակարգմանը հաջորդում է հայերենի 10 խոսքի մասերի խոր ու համակողմանի քննությունը: Նա մի կողմից՝ ներկայացնում է խոսքի մասերն իրենց բնորոշ առանձնահատկություններով, նրանց քերականական կարգերի ու համակարգերի (մասնավորապես զոյականի թվի ու հոլովման, բայի խոնարհման ու սեռի) կանոնարկումը, մյուս կողմից՝ բացահայտում է դրանցում կենդանի խոսակցական լեզվի ազդեցությամբ կատարվող տեղաշարժերը, նոր միտումները, զուգահեռ ձևերի ակտիվացումը, բառերի (մասնավորապես յնքբովոր խոսքի մասերին պատկանող) խոսքիմասային փոխանցումներն ու տեղաշարժերը և այլն:

Դիտական խորությամբ ու մանրակրկիտությամբ է քննվում նաև արդի հայերենի շարահյուսությունը: Այստեղ նույնպես շատ են ավանդական ըմբռնումների նոր մեկնաբանություններ: Փաստական նյութի նկարագրությունը տարվում է տեսական բացատրությունների ու եզրակացությունների զուգակցումով՝ կոնկրետ լեզվականից գնալով դեպի տեսական ընդհանրացումները: Արդ՝ ի՞նչ է ուսումնասիրում շարահյուսությունը: Շարահյուսության առարկա հանդիսացող երևույթները, — գրում է հեղինակը, — ըստ ստորակարգության հետևյալ պատկերն ու համակարգն են ներկայացնում՝ բառակապակցություն, նախադասություն և նախադասությունների կապակցություն (էջ 269): Ի դեպ, նախադասությունների կապակցությունը մեզանում առաջին անգամ Ս. Արբաճաճյանն է դիտել ու ներկայացրել որպես շարահյուսության առանձին բաժին՝ դրանով իսկ ճշտելով ու ամրողացնելով շարահյուսական համակարգի քննությունը: Դիտականը բառակապակցությունը բնութագրում է որպես բառերի այնպիսի կապակցություն, որի բաղադրիչները կապված են քերականորեն, բայց ոչ ստորոգման հարաբերությամբ: Նա բառակապակցությունները դասակարգում է՝ ա) ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերության, բ) ըստ շարահյուսական արժեքի, գ) ըստ կազմության, դ) ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության:

Նախադասությունը լեզվական հաղորդակցման հիմնական նվազագույն միավորն է, որի բնորոշ քերականական հատկանիշներն են ստորոգումը և հնչերանգային ավարտվածությունը: Ս. Արբաճաճյանը նախադասությունները դասակարգում է ա) ըստ կազմության (պարզ և բարդ), բ) ըստ հիմնական բաղադրիչների դրսևորման (միակազմ և երկակազմ), գ) ըստ ավարտվածության (լրիվ և թերի) և դ) ըստ երանգի (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական), քննում է նախադասության այդ տարատեսակներն առանձին-առանձին՝ բացահայտելով յուրաքանչյուրի քերականական-կառուցվածքային, իմաստային-նյութականգային և ոճական-գործառական առանձնահատկությունները:

Գրախոսվող աշխատության մեջ նկատելի են նաև որոշ թերություններ: Այսպես՝ «Կանգնածներից ոմանք նստեցին» նախադասության մեջ (էջ 199) կանգնածներից ոմանք է համարված, մեր կարծիքով այն ռմանգ անորոշ դերանվան հետ (կանգնածներից ոմանք) բաղադրյալ ենթակա է: Մեզ թվում է՝ բուն կամ անկախ դերբայ+եմ կապակցությունը (օր., հուսառևատվող չէ) բայական բաղադրյալ ստորոգյալ դիտելու դեպքում եմ-ը պետք է անվանել ոչ թե

հանգույց (էջ 286), այլ օժանդակ բայ, քանի որ հանգույցը անվանական ստորոգյալի բաղադրիչ է: Հարակատար դերբայի մասին կարգում ենք. Մշակատար դերբայը երբեմն զորօ է ածվում նաև որպես ստորոգելիական վերագիր: Օրինակ՝ «Դու կլանքումդ այդպիսի բան տեսած ես» (էջ 199): Այսինքն՝ այստեղ հարակատար դերբայը դիտված է անվանական ստորոգյալի բաղադրիչ, Իսկ մի այլ տեղ (էջ 286) բուն դերբայի (այդ թվում նաև հարակատարի) և օժանդակ բայի կապակցությունը դիտվում է որպես բայական բաղադրյալ ստորոգյալ: Նախադասությունների դասակարգման ամբողջականությունը պահպանելու համար լավ կլինեք ներկայացված լինելը նաև նախադասությունների դասակարգումն ըստ բովանդակության նկատմամբ ունեցած հարաբերության (հաստատական և ժխտական):

Նշված թերությունները, ինչ խոսք, մասնակի բնույթ են կրում: Լեզվաբանական բարձր պատրաստականությունը, գիտական նրբանկատությունը և հայերենի զարգացման ներքին օրինաչափությունների հստակ ըմբռնումը հեղինակին հնարավորություն են ընձեռել ստեղծելու ժամանակակից գրական հայերենին նվիրված արժեքավոր մի աշխատություն, ուր առաջ քաշված հարցերը լուծվել են գիտական հիմնավորվածությամբ: Ս. Աբրահամյանի աշխատությունն ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն, ամփոփում է փաստական հարուստ նյութ ժամանակակից հայերենի կառուցվածքի, նրա զարգացման միտումների վերաբերյալ: Այն ժամանակակից գրական հայերենի համակարգային ամբողջական քննությունն է և ներդրում է հայերենագիտության մեջ:

ԱՆԻՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ